դատողութիւնս, բայց գլխաւորն այն է, որ այնտեղ նրանք ինձ կարողացել էին ներշնչել այդ վստահութիւնը:

Ճապոնում ես ինձ երբէք օտար չեմ զգացել. մարդ կարծես կորցնում է այնտեղ ծանօթի ու անծանօթի գաղափարը, այն աստիճան բաց ու սիրալիր է այն ժպիտը, որով ամեն կողմից դիմաւորում են քեզ մանկական պարզամտութեամբ:

Երբէք եւ ոչ մի տեղ ես այնպէս խոր չեմ զգացել սիրոյ եւ եղբայրութեան զգացումը դէպի ինձ շրջապատողները, ինչպէս Ճապոնում: Այդ աստիճան կախարդիչ է ճապոնացու ժպիտը:

Անհաշիւ են տաճարները – պագոդաները սրբազան Կիոտոյում: Նա ամբողջովին շրջապատուած է այդ սրբավայրերով, որոնք կառուցուած են քաղաքի ամենաբարձր դիրքերի վրա:

Քաղաքի երկու հակառակ ծայրերին բարձրանում է մի-մի հինգյարկանի պագոդա Իէսակա եւ Տօջի: Նեղ սանդուխը տանում է քեզ վեր, մինչեւ գագաթը, որտեղից հրաշալի տեսարան է բացւում ամբողջ քաղաքի վրա:

Յայտնի է շատ Սանջու-սան-գենդօ տաճարը, ուր կանգնած են իրար կողքին գթութեան աստուածուհու, Կուաննոնի 33,333 արձանները:

Մէջտեղում բազմած է իր գահին աստուածուհու ամենախոշոր արձանը, իսկ նրա երկու կողմից խիտ շարքերով կանգնած են նոյն աստուածութեան աւելի փոքր մարմնացումները:

Կուաննոն այնտեղ «հազարաձեռն» տիտղոս է կրում,